

Հաստատվել է
Տնօրինության 24.12.2025թ.
թիվ 01/33/25 որոշմամբ
Տնօրինության նախագահ-
գլխավոր տնօրեն
Արտակ Հանեսյան
Ուժի մեջ է՝ 01.10.2026թ-ից

«Ամերիաբանկ» ՓԲԸ
+(37410) 561111, +(37412) 561111, office@ameriabank.am

Հավելված 2
Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների

Խնայողական հաշիվ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 24.12.2025թ. թիվ 01/33/25 որոշմամբ,
սույն խմբագրությունը՝ 10.09.2026թ. թիվ 03/141/26 որոշմամբ, և ուժի մեջ է 01.10.2026թ-ից:

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն Հավելվածը սահմանում է խնայողական **հաշվի** պայմանները: Խնայողական **հաշվին** առնչվող՝ սույն Հավելվածում չներառված պայմանները սահմանված են Ընդհանուր պայմանների «Բանկային հաշիվ» հավելվածում¹:
- 1.2. Խնայողական հաշվում առկա՝ ցպահանջ դրամական միջոցների նկատմամբ, կիրառվում են տվյալ պահին գործող սույն Պայմանները, ներառյալ՝ գործող տոկոսադրույքները:
- 1.3. Մինչև 2026թ. մարտի 15-ը՝ ներառյալ, խնայողական **հաշվի** պայմանները ներառված են եղել «Ամերիաբանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց ավանդների և խնայողական հաշվի սակագներ» փաստաթղթում (11RBD PL 72-05-02):
- 1.4. Խնայողական **հաշիվը** Բանկային **հաշվի** տեսակ է:
- 1.5. Խնայողական **հաշիվը** գործում է անժամկետ:
- 1.6. Խնայողական **հաշվին** առկա դրամական միջոցների նկատմամբ **Բանկը** հաշվարկում և **Հաճախորդին** վճարում է տոկոսագումար՝ համաձայն **Պայմանագրի**:
- 1.7. **Հաճախորդին** իրավունք ունի ավելացնել և նվազեցնել խնայողական **հաշվի** մնացորդը:
- 1.8. **Հաճախորդը** կարող է խնայողական **հաշվով** կատարել **Գործարքներ** և օգտագործել իր խնայողական **հաշվին** առկա դրամական միջոցները՝ առանց կուտակված տոկոսագումարների կորստի:

2. Խնայողական հաշվի տոկոսադրույք

- 2.1. Խնայողական **հաշվի** փաստացի մնացորդի դիմաց վճարվող տոկոսադրույքի չափը և դրան համապատասխան՝ տվյալ խնայողական **հաշվի** միջին օրական նվազագույն մնացորդի պահանջը.

3. Հաշվի արժույթ	ՀՀ դրամ
------------------	---------

¹ Ֆիզիկական անձանց սպասարկման ընդհանուր պայմանների «Բանկային հաշիվ» հավելված (11RBD RL 72-01-20), ընդունվել է Բանկի Տնօրինության 24.12.2025թ. թիվ 01/33/25 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

Տարեկան անվանական տոկոսադրույք	3.0%
Տարեկան տոկոսային եկամտաբերություն	3.04%
Հաշվի միջին օրական նվազագույն մնացորդ	200,000 ՀՀ դրամ

3.1. ԱՄՆ դոլարով, Եվրոյով և ՌԴ ռուբլով խնայողական հաշվի բացումը կատարվում է մինչև 30.09.2026 թ-ը ներառյալ, իսկ մինչև նշված ժամանակահատվածը նշված արժույթներով բացված խնայողական հաշիվների համար կիրառվում է 0.01% տարեկան անվանական տոկոսադրույք՝ տարեկան 0.01% տոկոսային եկամտաբերությամբ:

3.2. Տոկոսագումար վճարվում է միայն այն օրերի համար, երբ խնայողական **հաշվի** միջին օրական փաստացի մնացորդը հավասար է կամ գերազանցում է վերոնշյալ աղյուսակում նշված նվազագույն գումարը: **Հաշվի** մնացորդը նշված նվազագույն մնացորդից փոքր լինելու դեպքում վճարվում է տոկոսագումար տարեկան **0.01%** տոկոսադրույքով՝ նշված բոլոր արժույթների համար:

3.3. **Ծառայությունների փաթեթների** համար դրանց **Ծառայության պայմաններով** կարող են սահմանվել սույն **Հավելվածում** նշված տոկոսադրույքներից բարձր տոկոսադրույքներ:

4. Տոկոսագումարի հաշվարկ

- 4.1. Տոկոսագումարները հաշվարկվում են օրական կտրվածքով՝ տվյալ օրվա դրությամբ **հաշվին** առկա փաստացի դրական մնացորդի նկատմամբ:
- 4.2. Տոկոսագումարները հաշվարկվում են գումարը **հաշվին** մուտքագրվելու օրվանից մինչև այդ գումարը **հաշվից** ելքագրվելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
- 4.3. Հաշվարկում տարին ընդունվում է 365 օր, նահանջ տարվա համար՝ 366 օր:
- 4.4. Տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա:
- 4.5. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է **ՀՀ** Կենտրոնական բանկի «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը Կանոնակարգ 8/02-ով» սահմանված կարգով՝ հետևյալ բանաձևով.

$$APY = (1 + r / n)^n - 1$$

որտեղ՝

APY - տարեկան տոկոսային եկամտաբերությունն է,

r - տարեկան անվանական տոկոսադրույքն է,

n - մեկ տարվա ընթացքում տոկոսագումարների կապիտալացման հաճախականությունն է:

- 4.6. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանա **Հաճախորդը**՝ ավանդի (**հաշվի**) հետ կապված պարտադիր վճարները կատարվելու և վաստակած տոկոսագումարները **հաշվին** ավելացվելու (կապիտալացման) արդյունքում:

5. Տոկոսագումարի վճարում

- 5.1. Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջում՝ գումարվելով **հաշվի** մնացորդին (կապիտալացում):
- 5.2. Տոկոսագումարները վճարվում են **հաշվի** արժույթով:

- 5.3. Տոկոսագումարները ենթակա են հարկման՝ **Օրենսդրության** համաձայն: **Բանկը**, որպես հարկային գործակալ, սույն կետի համաձայն **Հաճախորդին** վճարված տոկոսագումարներից վճարում է **Հաճախորդի** կողմից վճարման ենթակա հարկերը՝ **Օրենսդրությամբ** սահմանված կարգով: